

ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐ

Հայերենում կան բազմաթիվ բառեր, որոնք տեղ չեն գտել ստուգաբանական բառարաններում կամ տեղ գտնելուց հետո էլ համարվել են անհայտ ծագման, և կամ դրանց համար ստուգաբանություններ են առաջարկվել վերապահումներով ու կասկածներով: Այդպիսի բառերի նորովի ստուգաբանությունը՝ հիմնված ոչ միայն հնչյունական համապատասխանությունների, այլև բովանդակային վերլուծության և իմաստային հանրությունների բացահայտման վրա, հաճախ տալիս է նոր, հետաքրքիր արդյունքներ՝ հնարավորություն ընձեռելով այդ բառերի մեծ մասը բխեցնելու հնդեվրոպական նախալեզվի հայտնի արմատներից:

Շարունակելով հ.-է. *smē- (*smeī-, *sm-ei-) «քսել, շփել, տրորել, քերել» արմատից ու նրա ածանցյալ (աճականներով ընդլայնված և ձայնդարձի տարբեր աստիճաններով ձևավորված) տարբերակներից բխեցվող հայերեն մի շարք բառերի (*մերսել, մարզել, մաշտել, մշտել, մշտիկ, մշուր, մշոշ, մշակել, մարմանդ, մարմաշ, մրափ, մուգ, մզել, մերժել* և այլն) նորովի ստուգաբանությանը նվիրված մեր մի հոդվածում¹ ներկայացված պրպտումները՝ ստորև անդրադառնում ենք հ.-է. նույն արմատից ծագած հայերեն բառերի ևս մի խմբի:


Յ. Պոկորնու բառարանում տրված այդ *smē- (*smeī-, *sm-ei-) «քսել, շփել, տրորել, քերել, սրբել, մաքրել; փաթեթել, լցնել, սեղմել, ճնշել, հափշտակել, խլել» պարզական արմատի (№ 1785)² *s- սկզբնահնչյունը անկայուն է (սահող *s-) և ժառանգ ձևերում շատ հաճախ ընկնում է: Այս պարզական արմատի աճականով ընդլայնումները և ձայնդարձի տարբեր աստիճաններով փոփոխակները նույն բառարանում տրված են մասամբ այդ նույն բառահոդվածում՝ *smeid-/*smidjo-, *smē(i)k-/*smīk-, *smē(i)g-/*smīg-, *(s)mēu-/*(s)məu-/*(s)mu-, մասամբ՝ առանձին բառահոդվածներով՝ *mer-5, *merə- «քսել, տրորել, շփել, սրբել, մաքրել; փաթեթել, լցնել, սեղմել, ճնշել, խլել» (№ 1296), *maġ- «սեղմել, մամլել, հունցել, շաղախել» (№ 1208), *maġh- «կովել, մարտնչել, պայքարել» (№ 1209), *mai-2 (*moi-?) «քսել, կեղտոտել, անմաքուր» (№ 1211), *māk-2 «հունցել, շաղախել, տրորել, սեղմել, մամլել» (№ 1214), *mei-k- (և *mei-ġ-?) «հարել, խառնել» (№ 1251), mel-1 (smel-), melə-, mlē-, mlǽ- «աղալ, մանր, նուրբ»

¹ **Զ. Զաքարյան**, *Ստուգաբանական փորձեր և ճշգրտումներ* – «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», հմ. 2, Ե., 2017, էջ 71-79:

² Փակագծերում նշված են Յ. Պոկորնու *Indogermanisches etymologisches Wörterbuch* (Bern-München, 2005) բառարանի առցանց տարբերակի բառահոդվածների հերթական համարները (<http://www.proto-indo-european.ru/dic-pokorny>):

(№ 1257), melk-1 «շփել, տրորել, քերել» (№ 1270), men-2 «տրորել, ճնշել, սեղմել, քայլել» (№ 1278), men(ə)k- «հունցել, շաղախել» (№ 1286), menth-1, meth- «հարել, խառնել» (№ 1290), (mer-3), mor-(u)- «սևացնել, մուգ բիծ» (№ 1294), mer-6, mer-s- «անհանգստություն, զայրույթ» (№ 1297), merg-1 «պլոկել, մաքրել, ջնջել» (№ 1301), merk-2, mork- «մռայլ» (№ 1306), meu-2, meṣə- «շարժել, հեռացնել» (№ 1310), meug-2, meuk- «սահել, շարժվել» (№ 1313) և այլն:

Հ.-ե. *smē- (*smeī-, *sm-ei-) արմատը դուստր լեզուներում լայնորեն ճյուղավորվել է ոչ միայն ձևային, այլև իմաստային զարգացումներով: Ահա իմաստային զարգացման մի համառոտ ուրվագիծ՝ ըստ Յ. Պոկոռնու ներկայացրած նյութերի (տե՛ս գծանկարը):



Նշված իմաստային անցումների և գիտականորեն ճանաչված հնչյունական օրենքների սահմաններում են տեղավորվում չստուգաբանված կամ փոխառյալ համարվող հայերեն մի շարք բառեր, որոնք առաջարկում ենք բխեցնել հ.-ե. վերոհիշյալ *smē- (*smeī-, *sm-ei-) «քսել, շփել, տրորել, հրել, քերել, աղալ, շաղախել, սեղմել, խրել, փշրել, մանր, նուրբ, թեթև» արմատից ու դրա ածանցյալներից: Այդ բառերը խմբավորված են ըստ իմաստային դաշտերի:

Նախ տրված են իմաստային տվյալ փնջի բառերը՝ ամեն մեկն իր տարբերակ(ներ)ով (եթե կարևոր են), բառակազմական բանաձևով (եթե բառը բաղադրյալ է), բառարաններում գրանցված իմաստներով, ածանցյալ(ներ)ով (եթե կան և կարևոր են), մեր առաջարկած նոր ստուգաբանության բանաձև(եր)ով: Ապա նշված են հ.-ե. պարզական արմատը՝ տվյալ փնջի բառերին համապատասխանող իր իմաստներով, և տվյալ բառափնջի իմաստային դաշտը: Այնուհետև ամեն բառի համար ներկայացված է նրա ստուգաբանության մինչ այժմ եղած վիճակը՝ աղբյուր բառարանների նշումով: Վերջապես տրված են տեղեկություններ տվյալ փնջի բառերում առկա ածանց(ներ)ի մասին: Ամեն մի բառափնջի համար տողատակում տրված են Յ. Պոկոռնու և այլ ստուգաբանական բառարաններից բերված հայերեն և

այլալեզու զուգահեռներ: Շարադրանքի այս կառուցվածքը երբեմն մասամբ խախտված է ըստ նպատակահարմարության: Ահա այդ բառերը:

Մրեղ (մռեղ) (մր+եղ) «հարդի փոշիացած մանրուք՝ մղեղից խոշոր, հարդից մանր», **մրեղել** «փոշիացնել, քանդել, ոչնչացնել» [$<^*(s)mō-r-$], **մամուր** (մամ+ուր) «1. ռանդված տաշեղ, 2. քերոցի մանրացրածը՝ փշրածը» [$<^*(s)mā-m-$], **մունգ** «հարդի հողախառն մանրուք» [$<^*(s)mō-n-gh-$] (բոլորն էլ՝ $<^*(s)me-$ «աղալ, շաղախել, մանր, նուրբ» արմատից):³ Այս խմբի բառերը առնչվում են փշրելու և խառնելու գործողություններին (նշանակում են գործողություն կամ դրա արգասիք): Սրանցից առաջինը Հ. Աճառյանը համարել է **մղեղ** «փոշի, մոխիր, մաղուք» ($<^*mol-$ «մանրել, փշրել») բառի տարբերակ (**ր-ղ** տարնմանությամբ առաջացած), երկրորդն էլ՝ դրա ածանցյալ (ՀԱԲ, 3, 331-332): Սակայն Ս. Մալխասյանը իմաստով հստակ տարբերակել է **մղեղ** և **մրեղ (մռեղ)** բառերը (Մալխ., 3, 375): Հետևաբար դրանք հայերենի մակարդակում նաև արմատով են տարբեր: Երրորդ բառը (*մամուր*) կասկածով ստուգաբանել է Գ. Ջահուկյանը՝ համարելով կրկնավոր [$*mā-mōr-$] (ՀԼՊ ԵԺ, 139): Մեր վարկածը փոքր-ինչ տարբեր է սրանից. համարում ենք ոչ թե կրկնավոր, այլ ածանցավոր կազմություն: Զորրորդ բառը (*մունգ*) ստուգաբանական բառարաններում չկա. վերցրել ենք այլ բառարաններից (Մալխ., 3, 246, 363, ՀԼԲԲ, 4, 20): Այս բառերում առկա **-եղ (-էղ)** ածանցի համար հմմտ. *տաշեղ, ասեղ, ուղեղ, -ուր/-իր* ածանցի համար՝ *փշուր, մրուր, բլուր, բարուր, կտուր, մոծիր, թմիր, խտիր* (տե՛ս նաև Ջահ.-98, 15-16):

Մորեխ (մորեախ, մարախ, մուրեխ, միրիխ) (մոր+եխ) «վնասատու ուղղաթև միջատ» [$<^*(s)mo-r-$, $*^*(s)mā-r-$, $*^*(s)mō-r-$, $*^*(s)mē-r-$], **մծեխ (մծեղ, մրծեխ, մծիկ)** (մծ+եխ, մրծ-եխ, մծ-իկ) «խայթող մանրիկ միջատ» [$<^*mōl(r)δ-$ $<^*(s)mō-(r)-g^wh-$], **մոծակ** (մոծ+ակ) «թևավոր արնախում միջատ» [$<^*(s)mo-g'-$], **մլակ** (մլ+ակ) «խայթող թևավոր մանր միջատ» [$<^*mōl-$ $<^*(s)mō-l-$], **մամուկ** (մամ+ուկ) «սարդ» [$<^*(s)mā-m-$], **մաթիլ** (մաթ+իլ) «1. մանր ոջիլ, 2. (փխբ.) նիհար, վտիտ» [$<^*(s)mā-t-$] (բոլորն էլ՝ $<^*(s)me-$ «տրորել, ճզմել, սեղմել» պարզական արմատից):⁴ Այս

³ Հմմտ. հ.իսլ. *merja* «խփել, ջարդել, մանրել, փշրել»; խեթ. *marriattari* «կտրտված, մանրված», սերբ. *mr̆va* «փշրանք», ն.իսլ. *mor* «փոշի, աճյուն», արլ.ֆրիզ. *murt* «փխրուն զանգված, փոշի», շվեյց. *murz, morz* «մանր կտորտանք», հ.հնդկ. *maṣam, maṣīm kar-* «փոշիանալ», *maṣi-, maṣī* «փոշի», հ.բ.գերմ. *morsāri* «1. հավանգ, սանդ, 2. շաղախ», մ.գերմ. *zermorschen*, շվեյց. *morsen, mürsen* «փշրել», ն.գերմ. *morzelen* «տրորել» (№ 1296), մ.իռլ. *men* «ալյուր, փոշի» (№ 1278), հայ. *մնշել* «ճմլել, տրորել, շաղել» (ՀԱԲ, 531), նաև՝ լատ. *mīca* «փշուր», նորվ. *mugg* ($*muwwa-$) «թեփ, տոցուկ» (№ 1785):

⁴ Հմմտ. հայ. *մոր(ս)*, *մուր* «փաղեծ, թունավոր միջատ» (ՀԱԲ, 535, Աղաբ., 138-139), *մրջիւն (մրջիսն)* (ՀԱԲ, 543, Աղաբ., 129-139), *մողես (մողեղ)* «խլեզ» (№ 1257, ՀԱԲ, 533), *մլուկ* «փայտոջիլ», *մղմող* «ցեց» (ՀԱԲ, 3, 225, *մալ* «մանրել, փշրել» բառահոդվածում), *մեց (մէց)* «ցեց, ոջիլ, որդ» (Աղ., 119-120), գոթ. *malō*, հ.իսլ. *molr* ($*molu-$) «թիթեռ, ցեց», հ.բ.գերմ. *mil(i)wa* «տիզ»,

խմբում միջատ նշանակող բառեր են:⁵ Սրանցից առաջինը (*մորեխ*) Հ. Աճառյանը Հ. Հյուբշմանի հետևողությամբ համարել է փոխառություն պահլավերեն ենթադրյալ *maḍax ձևից (ՀԱԲ, 3, 274), սակայն այդպես կարող է բացատրվել միայն **մարախ** տարբերակը, իսկ միջնադարյան **մորեախ**, արդի գրական **մորեխ** և բարբառային **մուրեխ**, **միրիխ** տարբերակները հակասում են այդ ստուգաբանությանը: Երկրորդը (*մժեխ, մժեղ*) Հ. Աճառյանը չի ստուգաբանել, իսկ Գ. Ջահուկյանը կասկածով կապել է *mu- բնաձայնական արմատի հետ (ՀԱԲ, 526): Աժանցի **-եղ** տարբերակը կարելի է դիտարկել որպես **-եխ**-ի ձայնեղացման հետևանք կամ էլ առանձին աժանց: Երրորդը (*մոծակ*) Հ. Աճառյանը համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (ՀԱԲ, 3, 341), իսկ Գ. Ջահուկյանը կասկածով համարել է բնաձայնական կազմություն, որ զուգահեռներ ունի թե՛ հ.-ե., թե՛ կովկասյան լեզուներում (ՀԱԲ, 526): Այս տարաձայնությունը բավարար հիմք է նոր ստուգաբանություն առաջարկելու համար: Իսկ հ.-ե. և կովկասյան լեզուների համապատասխան ձևերի նմանությունը կարելի է բացատրել նոստրատիկ ընդհանրությամբ: Չորրորդ և հինգերորդ բառերը (*մշակ, մամուկ*) չկան ստուգաբանական բառարաններում. վերջերս ենք այլ բառարաններից (Մալխ., 3, 246, 341, ՀԼԲԲ, 4, 20, 61): Վեցերորդը (*մաթիլ*) համարվում է անհայտ ծագման (ՀԱԲ, 3, 223, ՀԱԲ, 500): Այս խմբի բառերում առկա **-իլ** աժանցի համար հմմտ. *ռջիլ, կաթիլ, փաթիլ*, (տե՛ս նաև Ջահ.-98, 26), **-եխ/-ախ/-իխ** աժանցի համար՝ *գոռեխ, կեռնեխ, շաղախ, հաճախ, խիզախ, -աղ* աժանցի համար՝ *խաղաղ, հապաղ, հոտաղ, կենցաղ, կախաղան, փակաղակ* (տե՛ս նաև Ջահ.-98, 9):

Ստղել «ուժգին հրել» [**մղտել <*(s)mu-l-d-* (դրափոխությամբ) *<*(s)meu-* «հեռացնել, տեղից շարժել»]:⁶ Հ. Աճառյանն այս բառի հավաստի ստուգաբանություն չի տվել (ՀԱԲ, 3, 355-356): Գ. Ջահուկյանն այս բառը անհայտ ծագման է համարել, սակայն համենայն դեպս նշել է, որ կարող է կապ ունենալ **մղել** (*mu-l-) բառի հետ (ՀԱԲ, 542): Այս բառը Ս. Մալխասյանը բացատրել է որպես «մխտել, ուժով մղել, հրել, շարժել» (Մալխ., 3, 373): Այս

հ.հնդկ. malūka- «որդանման», ն.բ.գերմ. Molch «մողես» (№ 1257), հ.վ.գերմ. moll(e) «սալամանդր» (ՀԱԲ, 533), ալբ. morr «ոջիլ» (№ 1296), լատվ. smidzis «տիգ, լու» (№ 1785), նաև՝ ալբ. mize «մոծակ», ռուս. мошка «մժեղ, մլակ», myxa «ճանճ» (Յիգ., *myxa*), իսպ. mosquito, արմ.ֆլամանդ. meuzie «մոծակ», լատ. musca, լիտվ. musė «ճանճ» (ՎԲԱ, mosquito), անգլ. moth, հոլ. mot, գերմ. Motte «ցեց» (ՎԲԱ, moth):

⁵ Իմաստային անցման համար հմմտ. *խլէզ* «մողես», *խրունջն* «խխունջ», *կրեայ* «կրիա», *կողինջ* «լարտուկ», *կարիճ, խեցգետին, խէշափառ* «ծովախեցգետին» [բոլորը՝ **(s)ke- < *sek-* «կտրել, ճեղքել, մանրել» արմատից (ՀԶ-1, ՀԶ-2)]:

⁶ Հմմտ. նաև՝ լատվ. maļcu, maļkt «հրում, ճնշում, տանջել, տառապանք», չեխ. mačk-aժm, -ati «ճնշում, սեղմում» (№ 1214), կիմր. maeddu հարվածել (№ 1208), հ.հնդկ. mivati «հրում է, մղում է», լատ. moveō «շարժել, հեռացնել, թափ տալ» (ՀԱԲ, 538):

բացատրության մեջ օգտագործված է **մխտել** բառը, որը նույն բառարանում հղված է **մխթել** բառին, սա էլ բացատրված է որպես «մշտել, հրել, բոթել» (Մալխ., 3, 342): Ահա այս **մխտել** բառը կարելի է նույնացնել **մտղել**-ի ***մղտել** ենթադրյալ նախաձևին (**տ** սաստկական ածանցով), որի **ղ**-ն հաջորդ **տ**-ի ազդեցությամբ խլացել է: Այսպիսով հաստատվում է Գ. Ջահուկյանի ենթադրությունը՝ **մղել – մղտել** կապի վերաբերյալ: Ս. Մալխասյանցի բառարանում կան նաև **մլել** «մղել, կոխել, մտցնել, խոթել, հրել, բոթել, հեռացնել, վռնդել» և **մլշտել, մլշկել** «մղել, բոթել, հրել» (Մալխ., 3, 341, ՀԼԲԲ, 4, 61) բառերը, որոնք Հ. Աճառյանը համարել է **մղել** բառի գավառական տարբերակներ (ՀԱԲ, 3, 355-356): Սրանցում առկա -**շտ/-շկ-** մասնիկը սաստկական կամ բազմապատկական ածանց է (հմմտ. *խառնշտել, ավրշտել, թոռնշկել, խորշկել, պաղշկել* և այլն, իսկ -**շտ/-շկ** հերթագայման համար հմմտ. *արշտոտալ/արշկոտալ*):

Մաղ «գտիչ» [**<*(s)mə-l- <*(s)me-** «աղալ, մանր, նուրբ»]:⁷ Այս բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել (ՀԱԲ, 3, 236-237): Գ. Ջահուկյանը համարել է անհայտ ծագման (ՀԱԲ, 503), սակայն **մղեղ** բառահոդվածում նշել է, որ ***mel-** «ջարդել, մանրել, աղալ» արմատից է նաև **մաղել** բառը (ՀԱԲ, 530): Նմանատիպ հղում կա նաև **մուլ** «աղում, սեղմում, ճնշում» բառահոդվածում՝ առանց պարզաբանման (ՀԱԲ, 537): Նկատենք, որ **մաղ** բառի **մաղել** ածանցյալը ունի ոչ միայն «մաղով անցկացնել, մաքրել, գտել», այլև «մանր կաթիլներով կամ փաթիլներով թափվել, շաղել» իմաստը (ԱՀԲԲ, 960): Նույն արմատից են ածանցված նաև **մաղիկ-մաղիկ** «մանրակաթիլ, հանդարտ, բարակ» (Մալխ., 3, 244), **մաղմաղ** «1. մարմանդ, հանդարտ վառվող, 2. տաք մոխիր» բառերը (Մալխ., 3, 245): Ստուգաբանորեն սրանց հետ կարելի է կապել նաև **մաղտվել** «ցրիվ գալ, տարտղնվել» բառը (Մալխ., 3, 245)՝ կազմված **տ** սաստկականով:

Նույն խմբին են հարում «ջարդել, տրորել, քսել» իմաստներից ածանցված նաև **մլոզել** (մլ+ոզ-) «1. քսելով կեղտոտել, 2. (փխբ.) քաղցր խոսքերով համոզել» [**<*(s)mə-l- <*(s)mə-l-**], **մալեզ** (մալ+եզ) «շրեշ, խյուս, սոսինձ», **մալածոր** (մալ+ա+ծոր) «տրորված, ճզմված», **մաժածոր** «հիվանդ, հիվանդոտ» (նախորդ բառից՝ առնմանությամբ)⁸, **մաղաղկուն** (*մաղ+մաղ+կուն) «մտածկոտ,

⁷ Հմմտ. հայ. *մեղմ* «հանդարտ, կամաց» (ՀԱԲ, 3, 301, ՀԱԲ, 522), կիմր. blydd «մեղմ, փափուկ», հ.բուլղ. млад «մատղաշ», ռուս. мѡлѡтъ «մանրել, փշրել, աղալ», լիտվ. smulkmė «մանրուք», բրետ. bleud, ալբ. mjel, հ.իսլ. mjöl, ն.բ.գերմ. Mehl, հուն. μόλευρον «ալյուր», μολθοός «մեղմ, փափուկ, փափկասուն» (№ 1257), նաև՝ հայ. *մաղմանդ* (Հ. Ջաքարյան, նշվ. աշխ.), հ.իսլ. mugga «մանր անձրև», (№ 1313), ռուս. мѡтать «շռայլել, շաղ տալ» (№ 1290), մ.բ.գերմ. murz «մնացորդ» (№ 1296):

⁸ **Մալածոր** և **մաժածոր** թերևս բարդ բառեր են, որոնց երկրորդ՝ **ծոր** արմատը կարելի է կապել բարբառային **ժռալ** «մի բանի մեջ թաթախվել, միբանոտվել» (ՀԼԲԲ, 2, 162) բայի **ժռոտ/ժռո/ժռոր** արմատի հետ, որ իմաստով համարժեք է **-ոտ** ածանցին, հետևաբար **մալածոր**

մտախոհ, թմրած» (կիսակրկնավոր) [$<^{*}(s)mə-l-$] բառերը (բոլորն էլ՝ $<^{*}(s)me-$ «աղալ, շաղախել, տրորել, մանր, նուրբ» պարզական արմատից):⁹ Այս բառերից ոչ մեկը չկա ստուգաբանական բառարաններում: Վերցրել ենք այլ բառարաններից (Մալխ., 3, 235, 241, 234, 246, 243): Սրանցից երկրորդը (*մալէզ*) Ս. Մալխասյանցը, հետևելով Հ. Աճառյանին, համարել է փոխառություն թրք. *melez* «խառնակ» բառից (Մալխ., 3, 235), սակայն նախ՝ հայերենը ձևով տարբեր է թուրքերենից, երկրորդ՝ թուրքերեն բառն ինքը փոխառություն է մեկ այլ լեզվից¹⁰: Ուստի ավելի հարմար է հայերեն այս բառը բխեցնել հ.-ե. նախաձևից: Այս խմբի բառերում առկա **-էզ/-ոզ** ածանցի համար հմմտ. *կոճղէզ, բզէզ, խլէզ, գոռոզ, տկլոզ, -կուն* ածանցի համար՝ *ղիմացկուն, խաղացկուն, ծիծաղկուն*:

Մաքուր (մաք+ուր) «սուրբ» [$<^{*}(s)māk^{w}-$ $<^{*}smē-$ «տրորել¹¹, ճզմել, սեղմել»]:¹² Կարելի է ենթադրել այս բառի ստուգաբանության նաև $^{*}(s)māk^{w}-ro-$ > *մաքու-ր* տարբերակը: Հ. Աճառյանը և Գ. Ջահուկյանը այս բառի հավաստի ստուգաբանություն չեն առաջարկել (ՀԱԲ, 3, 292, ՀՄԲ, 520): Սակայն իմաստային հանրությային անցումները (տրորել – սրբել) և այլալեզու զուգահեռները լուրջ հիմք են տալիս մեր առաջարկի համար: Այս բառի **-ուր** ածանցի համար տե՛ս վերը:

կնշանակի «մանրոտված», **մաժաժոր**՝ «հիվանդոտ»: Հմմտ. նաև **տապաժորել** «1. դիվահարվել, 2. սարսափահար լինել» (ՀԼԲԲ, 6, 135), **պալաժորել** «1. սիրտը կոտրվել, թախծից սրտաբեկ լինել, 2. տապալվել» (Մալխ., 4, 34):

⁹ Հմմտ. անգլ. *melt* «լուծել, հալեցնել» (ՎԲԱ), ռուս. *мелкий* «մանր», հուն. *ἀμβλύς* «1. բուրբ, 2. թույլ, հյուժված», կիմր. *malwoden* «ցեխ», *blin* «հոգնած», լատվ. *blīnēt* «հյուժվել, նիհարել, նվաղել» (№ 1257), հուն. *μαίνω, ἐμείων* «պղծել, կեղտոտել, ներկել», անգլ.-սաքս. *māl* «արատ, բիծ» (№ 1211), նաև՝ լատվ. *minu, mīt* «տրորել, աղաղել», ռուս. *мять, мну* «տրորել, ճզմել, ճմել» (№ 1278), լատ. *mortārium* «1. հավանգ, սանդ, 2. կրաշաղախ», *morbus* «հիվանդություն, ցավ», կիմր. *merw* «թույլ, հիվանդ» (№ 1296), հ.բ.գերմ. *gismāhteōn* «հյուժվել», հայ. *միծ* «ցեխ, կեղտ, միջին», անգլ.-սաքս. *smittian* «արատավորել, վարակել», գոթ. *ga-smeitan* «քուրք», մ.բ.գերմ. *smicke, sminke* «շալար» (№ 1785), ռուս. *мазь* «քուրք», բրետ. *meza* «հունցել» (№ 1208), հայ. *մաժուկ* «քուրք» (ՀՄԲ, 3, 228-230), ռուս. *марать* «կեղտոտել» (№ 1294), հ.հնդկ. *manḱu-* «թույլ, տատանվող» (№ 1286):

¹⁰ Տե՛ս Հ. Աճառյան, *Թուրքերեն փոխառեալ բառերը Պոլսի հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի և Նոր-Նախիջևանի բարբառներուն*, Մոսկուա - Վաղարշապատ, 1902, էջ 224:

¹¹ «Տրորել – մաքրել» իմաստային անցման համար հմմտ. ռուս. *тереть* «տրորել, քերել», *стирать* «տրորելով լվալ՝ մաքրել՝ սրբել», գերմ. *scheuern* «1. քերել, տրորել, 2. լվալ, մաքրել», ասոր. *tamruq* «1. շփում, 2. մաքրում», հայ. *ջնջել* «1. խփելով ջարդել, կոտորել, 2. տրորելով՝ շփելով մաքրել» [$^{*}guheniō-$ «խփել, ծեծել» (ՀՄԲ, 652)]:

¹² Հմմտ. նաև՝ *մկրտել* «ծիսական ջրով լվանալ» (ՀՄԲ, 529-530), լիտվ. *mūr(k)šlinu* «լվալ» (№ 1294), հ.հնդկ. *māṛṣti, māṛjati, mṛjati* «տրորել, լվալ, մաքրել», *vi-mrgvari* «մաքուր», *mṛṣta-* «սրբել» (№ 1267), հուն. *ἀμυσχερός, ἀμυχνός* «անբիծ, մաքուր, սուրբ» (№ 1313), *σμήχω* «մաքրել, լվալ», *σμήν* (կատ. *σμήσαι*) «մաքրել, սրբել, շփել» (№ 1785), *ὀμόργυνμι* «սրբել, մաքրել, լվալ» (№ 1301), կիպր. հուն. *μυλάσασθαι* «լվացվել», հ.բուլղ. *myjo, myti* «լվալ», ռուս. *мыть (мою)* «լվալ, մաքրել», *мыло* «օճառ», մ.բ.գերմ. *mūten* «երես լվալ» (№ 1309):

Մակարդ (մակ+արդ) «մերան, խմորիչ, լերդ, շաղախ»¹³ [$<^*(s)m\bar{a}-g^w-$ «լերդանալ, խմորվել, շաղախվել» $<^*(s)me-$ «տրորել, շաղախել»]¹⁴ Այս բառի հավաստի ստուգաբանություն չեն առաջարկել ո՛չ Հ. Աճառյանը (ՀԱԲ, 3, 231-232), ո՛չ Գ. Ջահուկյանը (ՀՄԲ, 501): **Մակարդ** բառի հետ իմաստով կապված է **մերան** (*մայր+ան) «մածունի կամ պանրի խմորիչ՝ մակարդ» բառը: Թեև դա Հ. Աճառյանը կապել է **մայր** «մամ» բառի հետ (ՀԱԲ, 3, 247)՝ որպես դրա փոխաբերական կիրառություն, սակայն անհավանական չէ ենթադրելը համանունություն և դրա կապը **մակ-արդ** բառի առաջին արմատի հետ [$<^*(s)mai-r-$]:

Մական (մակ+ան) «ձեռնափայտ, գավազան, ցուպ» [$<^*(s)m\bar{a}-g^w-$], **մկունդ** (մկ+ունդ) «մեծ նիզակ, գեղարդ, տեգ», **մկնդասեղ** (մկ+ունդ+ասեղ) «մախաթ», **մկդակել** (մկ+դակ-) «մախաթով վերմակ կարել»¹⁵ [$<^*m\bar{u}l-$ $<^*(s)m\bar{o}-g^w-$], **մկրատ** (մկր+ատ) «կտրող գործիք»¹⁶, **մկրօն** (մկր+օն) «թիթեղի ունելի-կտրոց» [$<^*m\bar{u}l-$ $<^*(s)m\bar{o}-g^w-r-$], **մախաթ** (մախ+աթ) «մեծ ասեղ, հերյուն, խթան» [$<^*(s)m\bar{a}-k'h-$], **մեխ** (մխել) «գամ», **մեխակ** (մխխակ, **մուխակ**) (մեխ+ակ) «մեխանման ծաղիկ» [$^*(s)me-k'h-$, $^*(s)m\bar{e}-k'h-$, $^*(s)m\bar{o}-k'h-$], **մագիլ** (**մակիլ**, **մաքիլ**) (մագ+իլ) «սրածայր եղունգ, ճիրան, ճանկ» [$<^*(s)m\bar{a}-g^wh/g^w/k^w-$], **մանգաղ** (**մանգեղ**, **մանգօղ**, **մանկաղ**) (մանգ+աղ) [$<^*(s)m\bar{a}-n-g^h-$], **մանկեռ** (մանկ+եռ) «1. ատամնավոր տափան, 2. փոցիս» [$<^*(s)m\bar{a}-n-g-$], **մարանդի** (մար-անդի) «արմնկաձև կարճակոթ մեծ մանգաղ՝ ցորեն ու գարի հնձելու համար» [$<^*(s)m\bar{a}-r-$], **մառախ** (մառ+ախ) «սեպ, մեխ, գամ» [$<^*(s)m\bar{a}-r-s-$], **մաղաղիլ** (մաղ+աղ-) «մեխվել» [$<^*(s)m\bar{a}-l-$], **մեղեխ** (մեղ+եխ) «1. լախտ, 2. կացնի, ուրագի են կոթ» [$<^*(s)me-l-$], **մահակ** (մահ+ակ) «գավազան, ձեռնափայտ, հաստ բիր» [$<^*(s)m\bar{a}-s-$] (բոլորն էլ՝ $<^*(s)me-$ «տրորել, ճզմել, սեղմել, մխել» պարզական արմատից):¹⁷ Այս խմբում մեծ մասամբ

¹³ **Մակարդ** բառի երկրորդ՝ **արդ** ածանցակերպը «կերպ, ձև, նման» իմաստով է գործածված: Ուստի **մակարդ** բառի բնիմաստը պիտի ենթադրել «լերդանման, լերդաձև», **մակարդել** բառինը՝ «լերդացնել»:

¹⁴ Հմմտ. հուն. μάκτρο «եկած խմոր» (№ 1208), հ.հնդկ. ā-mīksā «կաթնաշոռ», ou. misin «թան», մ.իռլ. medg, կիւր. maidd, ն.կոռն. meith, հ.բրետ. mēgue, հ.իսլ. mysa «շիճուկ» (№ 1251), նաև՝ լատվ. miļeles «խմորիչ» (№ 1211), հ.հնդկ. nir-mārgā-(h) «շաղվել», մ.բ.գերմ. molchen, molken «կաթնաշոռ», ռուս. молозиво «դալ, առաջին կաթ» (№ 1267):

¹⁵ Այս բառի **դակել** բաղադրիչը նշանակում է «ծակել» (ԱՀԲԲ, 271):

¹⁶ Հմմտ. **մգրուդ** «խաչափառ» (ՀԼԲԲ 4, 39), քանի որ խաչափառը ունի մկրատաձև ճանկեր:

¹⁷ Հմմտ. հայ. *մուխ*, *մխրճել* «խրել» (ՀՄԲ, 537, 530), *մկրտել* «խորասուզել, լվանալ» (ՀՄԲ, 529-530), *մառ* «ցեղ, փուշ» (ՀՄԲ, 510), *մարտ* «կոիվ» (ՀՄԲ, 3, 289, ՀՄԲ, 518), *մուրց* «բոունցք» (ՀՄԲ, 541), *մուրճ* «կոռն» (ՀՄԲ, 540), *մաքանել* «պայքարել» (ՀՄԲ, 519), մ.բ.գերմ. smicke «ճիպոտ; վերք, սպի», geißeln «կտրել, խփել», (№ 1785), հուն. μάχη «մարտ, կոիվ», μάχαφα «թուր, դաշույն, դանակ» (№ 1209), լատ. mulcō, -āre «ծեծել, ջարդել, տանջել» (№ 1270), լատ. mergae, -

հարվածելու, ծակելու կամ կտրելու գործիք կամ գործողություն նշանակող բառեր են: Դրանցից առաջին երկուսը (*մական, մկունդ*) համարվում են հավաստի ստուգաբանություն չունեցող (ՀԱԲ, 3, 231, 330, ՀՄԲ, 501, 529), երրորդը (*մկնդասեղ*) Հ. Աճառյանը համարել է երկրորդի ածանցյալ (ՀԱԲ, 3, 330), չորրորդը (*մկդակել*) ստուգաբանական բառարաններում չկա. վերցրել ենք այլ բառարաններից (Մալխ., 3, 343, ՀԼԲԲ, 4, 64): Հինգերորդը (*մկրատ*) Հ. Աճառյանը Հ. Հյուբշմանի հետևողությամբ համարել է փոխառություն արաբերեն *miqrāḏ*-ից (ՀԱԲ, 3, 330-331), իսկ վեցերորդը (*մկրոն*) համարել է հայերեն համաբանական կազմություն նախորդ բառից (ՀԱԲ, 3, 331)¹⁸: Նույնարմատ *մկրտել* բառի հ.-ե. ծագման ճանաչումը (ՀՄԲ, 529-530) բավարար հիմք է մեր նոր առաջարկի համար: Յոթերորդը (*մախաթ*) Հ. Աճառյանը Հյուբշմանի հետևողությամբ համարել է փոխառություն ասորերեն *məxattā*-ից (ՀԱԲ, 3, 227, ՀՄԲ, 501): Ութերորդն ու իններորդը (*մեխ, մեխակ*) Հ. Աճառյանը համարել է փոխառություն պարսկերեն *mēx*, *mēxak* բառերից (ՀԱԲ, 3, 294, ՀՄԲ, 521), թեև դրան հակասում են բարբառային **մխել, մուխակ** տարբերակները և տանում դեպի **մուխ** «մխրճել» [**(s)meuk-* «սահել» **(s)me-* «տրորել, սեղմել, մխել»] արմատը (ՀՄԲ, 537): Տասներորդը (*մագիլ*) Հ. Աճառյանը կասկածով համարել է փոխառություն կովկասյան լեզուներից (ՀԱԲ, 3, 219, ՀՄԲ, 499): Տասնմեկերորդը (*մանգաղ*) Հ. Աճառյանը համարել է փոխառություն ասորերեն ենթադրյալ **mangālā* ձևից (ՀԱԲ, 3, 251, ՀՄԲ, 507): Բայց հայերենում կան **մանգ-** արմատով այլ բառեր ևս, որ հակասում են փոխառության վարկածին և նպաստում մեր առաջարկած հ.-ե. ծագման վարկածին:¹⁹ Տասներկուերորդը (*մանկեն*) չկա ստուգաբանական բառարաններում (տե՛ս Մալխ., 3, 254, ՀԼԲԲ, 4, 24): Տասներեքերորդը (*մարանդի*) նույնպես չկա ստուգաբանական բառարաններում (տե՛ս Մալխ., 3, 271, ՀԼԲԲ, 4, 34): Սա թերևս կազմվել է **գերանդի** բառի համաբանությամբ: Վերջին չորսը (*մառախ, մաղաղիլ, մեղեխ, մահակ*) մինչ այժմ համարվել են անհայտ ծագման (ՀՄԲ, 511, 503, 522, 502): Այս խմբի բառերի ձևային ու իմաստային ընդհանրությունը հիմք է տալիս պնդելու, որ դրանք բոլորն էլ նույնարմատ բնիկ հայերեն են: Իսկ սեմական ու կովկասյան լեզուների հետ նմանությունը կարելի է բացատրել նոստրատիկ

ārum «1. եղան, եռածանի, 2. հարվածել» (№ 1301), լիտվ. *mentė* «մածկաթիակ», *meñte* «բահ» (№ 1290), լատ. *marcus*, ռուս. *молот* «մուրճ» (№ 1257):

¹⁸ Տե՛ս նաև Գ. Ջահուկյանի մեկնաբանությունը՝ «Հավանաբար *մկրատ*-ից հարմարեցված բառ՝ *-ատ*-ը ածանց կարծելով (*մկր+ոն*)» (ՀՄԲ, 530):

¹⁹ Հմմտ. անհայտ ծագման համարվող **մանգառ** «մի խմորեղեն», **մանգ(ախտտ)** բառերը (ՀՄԲ, 507-508), որոնք նույնպես կարելի է բխեցնել վերոհիշյալ **(s)me-* «տրորել, ճզմել, սեղմել» արմատից, ինչպես նաև **մունգ** «հարդի հողախառն մանրուք» բառը (տե՛ս վերը): Այս **մանգ**-ից տարբեր է համանուն **մանգ- (մանկ-)** «նենգ, խորամանկ» արմատը (ՀԱԲ, 3, 253-254, ՀՄԲ, 508):

ընդհանրությամբ կամ փոխատվությամբ (հակառակ փոխառությամբ): Այս խմբի բառերում առկա **-ունդ** ածանցի համար հմմտ. *ելունդ, ծնունդ, սերունդ, սնունդ* (տե՛ս նաև Ջահ.-98, 34), **-ատ** ածանցի համար՝ *հաստատ, արմատ, կտավատ* (տե՛ս նաև Ջահ.-98, 16), **-օն (-աւն)** ածանցի համար՝ *կտրօն, լցօն, թափօն, ծամօն, կռճօն* (տե՛ս նաև Ջահ.-98, 19), **-աթ** ածանցի համար՝ *արծաթ, երկաթ, գաւաթ*: Իսկ **-իլ, -ախ/-էխ, -աղ/-էղ** ածանցների համար տե՛ս վերը:

Այսպիսով սույն հոդվածում ձևախմբատային, համեմատական և հանրությային վերլուծության հիման վրա առաջարկվում է հ.-ե. *smē- (*smēi-, *sm-ei-) «քսել, շփել, տրորել, քերել» արմատից ու նրա ածանցյալ (աճականներով ընդլայնված և ձայնդարձի տարբեր աստիճաններով ձևավորված) տարբերակներից բխեցնել հայերեն մի շարք բառեր (*մրեղ, մորեխ, մժեղ, մոծակ, մլակ, մաղել, մաքուր, մակարդ, մական, մկունդ, մկդակել, մկրատ, մախաթ, մէխ, մագիլ, մահակ, մանգաղ* և այլն), որոնք մինչ այժմ համարվել են հավաստի ստուգաբանություն չունեցող, երբեմն էլ՝ այս կամ այն լեզվից փոխառված:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱԲ – **Հ. Աճառյան**, *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4, Ե., 1971-1979

ՀՄԲ – **Գ. Զահուկյան**, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010

ՀԼԲԲ – *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. 1-7, Ե., 2001-2012

Մալխ. – **Ս. Մալխասեանց**, *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1944-1945

ՀԼՊ ՆԺ – **Գ. Զահուկյան**, *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987

Ջահ.-98 – **Գ. Զահուկյան**, *Հին հայերենի վերջածանցների ծագումը* – «Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր», Ե., 1998, էջ 5-48

Աղ. – **Է. Աղայան**, *Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ*, Ե., 1974

Աղաբ. – **Մ. Աղաբեկյան**, *Հայերենի համեմատական ուսումնասիրության հարցեր*, Ե., 2017

ՀԶ-1 – **Հ. Զաքարյան**, *Կարիճ, կարճ, կիրճ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն* – «Լեզուն և գրականությունը միջմշակութային հաղորդակցության համատեքստում» IV միջազգային գիտաժողով (2016 թ. հոկտեմբերի 13-14, ՀՀ, ք. Վանաձոր), գիտական նյութերի ժողովածու, Ե., 2016, էջ 87-91

ՀԶ-2 – **Հ. Զաքարյան**, *Խիունջ, քրքիր, կռպիտ և մի քանի այլ բառերի ստուգաբանություն* – «Արեղյանական ընթերցումներ - 2», Ե., 2018, էջ 79-83

Յիգ. – Г. П. Цыганенко *Этимологический словарь русского языка*. Киев, 1989 (<http://www.slovorod.ru/etym-cyganenko>)

ՎԲԱ – Wiktionary (<https://en.wiktionary.org/wiki>)

Hovhannes Zakaryan – Etymological Experiments and Revisions. – The present article, proceeding from morpho-semantic analyses and analyses of linguistic universals, offers to derive a number of Armenian words, still not etymologized or considered to be borrowings, from PIE root *smē- (*smeī-, *sm-ei-) "to smear, rub" and its derivative variants (extended by root determinatives and framed by different ablaut steps). They are: **մրեղ** "crushed straw" [<*(s)mō-r-], **մորեխ** "grasshopper" [<*(s)mō-r-], **մժեղ** "midge" [<*(s)mō-(r)-g^wh-], **մոծակ** "mosquito" [<*(s)mō-g'-], **մաղ** "sieve" [<*(s)mā-l-], **մաքուր** "clean" [<*(s)māk^w-], **մակարդ** "yeast" [<*(s)mā-g^w-], **մական** "stick" [<*(s)mā-g^w-], **մկրատ** "scissors" [<*(s)mō-g^w-r-], **մախար** "needle" [<*(s)mā-k' h-], **մեխ** "nail" [**(s)me-k' h-], **մազի** "claw" [<*(s)mā-g^wh-], **մանգաղ** "sickle" [<*(s)mā-n-gh-], **մահակ** "truncheon" [<*(s)mā-s-] etc.

Оганес Закарян – Этимологические опыты и пересмотры. – В настоящей статье на основе морфо-семантических анализов и анализов лингвистических универсалий предлагается считать, что ряд армянских слов, до сих пор считающихся заимствованными или же не этимологизированными, произошли от праиндоевропейского корня *smē- (*smeī-, *sm-ei-) "мазать, тереть, мять, скрести" и его производных вариантов (расширенных детерминативами и образованных разными степенями аблаута). Эти слова: **մրեղ** "измельчённый саман, распылённая сечка" [<*(s)mō-r-], **մորեխ** "саранча" [<*(s)mō-r-], **մժեղ** "мошка" [<*(s)mō-(r)-g^wh-], **մոծակ** "комар" [<*(s)mō-g'-], **մաղ** "сито" [<*(s)mā-l-], **մաքուր** "чистый" [<*(s)māk^w-], **մակարդ** "дрожжи" [<*(s)mā-g^w-], **մական** "клюшка" [<*(s)mā-g^w-], **մկրատ** "ножницы" [<*(s)mō-g^w-r-], **մախար** "игла" [<*(s)mā-k' h-], **մեխ** "гвоздь" [**(s)me-k' h-], **մազի** "коготь" [<*(s)mā-g^wh-], **մանգաղ** "серп" [<*(s)mā-n-gh-], **մահակ** "дубинка" [<*(s)mā-s-] и др.